

— ՏԵՂԵԿԱԳԻՐ

Ե Ւ

16419

ՀԱՅՈՒԵԿՃԻՌ —

Գ.Ա.Ղ.Թ. ԽՆԱՄԱՏԱՐՈՒԹԵԱՆ

ԿԵԴՐ. ՅԱՆՉԱԱԽՈՒՄԲԻ

(1929 ԴԵԿ. - 1932 ՍԵՊ.)

Հ. Ա. Լ. Լ. Պ.



ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

Ա. ՏԵՐ - ՍՈՀԱԿԵԱՆ

ՀԱԼԵՊ

361

4-24

361
9-24

— ՏԵՂԵԿԱԳԻՐ

Ե Ւ

ՀԱՅՈՒԵԿՃԻՐ —

ԳԱՂԹ. ԽՆՍՄՍՏԱՐՈՒԹԵԱՆ

ԿԵՐ. ՅԱՆՉԱԽՈՒՄԲԻ

(1929 ԴԵԿ. - 1932 ԱԵՊ.)

Հ Ա. Լ. Է. Պ



ՀԱՅ - ՀԱՅ ՀՀ
500

Տպագր. Ա. Տիր - ՍՈՀԱԿԵԱՆ

Հ Ա. Լ. Է. Պ

1932



2010

ԵՐԿՈՒ ԽՕՍՔ

Սոյն գրքով հրատարակելով, բնաւ նպասակ չունին,
մանաւանդ վերջերս՝ կարգ մը թերթերու եւ անհատներու կող-
մէ և նաև ատարութեան հասցեին ուղղուած քննադատութիւն-
ներուն պատավանելու եւ այդու բանավեճի մժմերու:

Վեր՝ ամեն անձնական նկատումներէ եւ խմբակցական
հաշիւններէ, մենք սարինք մեզի վսահուած զործը մեր կարե-
լիութեան չափով, եւ ահա ներկայի կ'ուտանք մեր կատարած
աշխատանքներուն զիսաւոր զիծերը՝ խիս սեղմ ամփոփոյնվ
մը, բոլոր որ զործերը եւ թիւերը իրենի խօսին եւ յարգելի
ընթեցողը ըստ այն ընէ իր դատասանը՝ մեր զործունեու-
թեան շուրջ:

Երէ ուշացանք սփառուած եինք, զի՝ զործին բնոյրը
այդ կը պահանջէր:

Հ 002

53 ԿՑ6 - սկ



ԿՊԾ 38-67

ԽՆԱՄԱՏԱՐՈՒԹԵԱՆ ԿաջՄՈՒԹԻՒՆ

1929 Գևկան. 12 ին կազմուեցաւ այս մարմինը, նա-
խաձևութեամբ Կիլիկիոյ Վեհ. Տ, Տ, Սահակ Բ, Կաթողի-
կոսի, որ տաեն՝ Թուրքիայ արևելեան գաւառներէն ար-
տահանուող քրատախօս հայ գաղթականները խուժեր էին հիւ-
սիսացին Սիւրբիոյ սահմանին մէջ, Հասիչէի, Գամիշլիի,
Ամուսէի և Գարամանիչէի շրջանները, շատերը անօթի,
թշուառ և կողոպտուած և հնթակայ զանազան տարափու-
խիկ հիւանդութեանց, Խնամատարութեան գործը պիտի
ըլլար տրեմին, այս վտարանդի բնիքորներուն պաշտպանու-
թեան և օգնութեան հոգը ստանձնել, ձեռք տանելով աղ-
գովին հնարաւոր եղաղ միջոցները:

զհա, Կաթողիկոսի կողմէ Խնամատարութեան անդամ
կըսուեցան՝

ՏԻԱՐ ՏՈՒԹՅ. Ա. ԱԼԹՈՒՆԵԱՆ ԱՏԵԽԱԿԵՏ

ԳԵՐՅԱՐԳԵԼԻ ԴԱԲՐԻՔԵԼ Վ., ԳԱՍՊԱՐԵԱՆ Բ. ԱՏԵԽԱՎԵ

ՏԻԱՐ ՏՈՒԹՅ. ՏԻՐ ԴԱԶԱՐԵԱՆ՝ ԱՏԵԽԱԿԱՒՐ

« ԱՐՄԵՆ ՄԱԶԼՈՒՄԵԱՆ՝ Գանձապահ»

^(*) ԳՐԻՎՈՐ ԱԶԻԹԵԱՆ՝ Խորհրդական

(*) Տիար Գրիգոր Աղքարեան մինչև 31 Յունիս 931 շաբաթաւ
կեց Եր անդամակցութեանը, որմէ քիչ վերջ նոր անդամներ նրա
շահակուեցան յանձնն Տեսարք Ս. Պատրիկեան և Ս. Մայակեանի:

— Կարճ միջոց մը անդամակցեցաւ նաև Տիար Հրանդ ՈՒ-
լահանն : :

ՆԱԽՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՍՔՆԵՐ

Նկատի ունենալով այս նորեկ զաղթականներու գիշակին օրբատօքէական վատթարացումը, ինսամատարութիւնը առաջն առմիւ այդ շրջանները մասնաւոր Յանձնախումբ մը զրկեց՝ յանձին Հ. Բ. Է. Միութեան տեղույս Մ. Ճիւղի Պաշտօնեաններէն՝ Պ. Մ. Թիրաննեանի և Տոքթ. Թ. Պասմաննեանի, որ պղնուօքէն տրամագրուեցաւ տեղույս մէջ երկար տարիններէ իվեր որրախնամ դործերով զրագով Միս Քարէն Եերէի կողմէ, որպէս իր հաստատութեան սիափական բժիշկը:

Այս Յանձնախումբին պաշտօնն էր իրեն տրամագրը ւած գումարով և գեղօրացքով անմիջական կարօտեալներուն նպաստել, առաջքն առնել տարածուած հիւանդութեանց և մօտէն ուսումնափրեալ զաղթականներու գոյավիճակը, տեղեկագիր մը բերել ինսամատարութեան, որը ողեղիծ մը պիտի ըլլար՝ յետագային ձեռք առնուելիք աշխատանքներուն:

Ասոր զուգընթաց, ինսամատարութիւնը, մասնաւոր զիմումով մը, տեղույս զինուորական Médecin Principal Քուօնէլ Քողքէի լուրջ աջակցաթիւնը ապահովեց, որուն շնորհիւ ասողջապահական խիստ կարեւոր սպասարկութիւններ կատարուեցան զաղթականներու շրջաններուն մէջ:

Բաց աստի յարարերութեան մէջ մտաւ Ազգ, Գաշնակցութեան Սուրբոց Գաղթականաց տեղաւորման ներկայացուցիչ Մր. Պիւրնիյէի, տեղույս Բ. Քոմիսէրի պատուիրակին, Բնդհանուր ապահովութեան և Տեղեկատու Գիւանի պետերուն հետ, ձեռք բերելու համար հնարաւոր նիւթա - բարոյական աջակցաթիւնը՝ յօդուա այս նորեկներուն:

Մասնաւոր նամակներ յղեց Հ. Բ. Է. Միութեան Բարիզի կեզրոնին և օտար լորեսիրական հաստատութեանց, և օգնութեան կոչեր՝ ուղղեալ ընդհանուր Հայութեան:

Այս եղբայրական օգնութեան գործին մէջ, երախտանիվիտութեամբ կարմէ շեշտել որ առաջին հետաքրքրուողը եղաւ Հ. Բ. Է. Միութիւնը՝ որ իր նախաձեռնութեամբ Բարիզի մէջ կազմեց Հանգանակիչ կեզր, Յանձնախումբ մը և հետզհետէ մզում տուաւ հանգանակութեան գործին, ապահովելով և ինսամատարութեան զրկելով 518, 919, 45 ֆրանքի գումար մը:

Այս գումարին մտս կը կազմեն Հ. Բ. Է. Միութեան Նախագահ Տիար Գալուստ Կիւլպէնկեանի ընծայած 50, 000 Ֆրանքը, որով 129 լծկան եզներ զնուեցան նորահաստատ զաղթականներուն, Լոնտոնի Արզարեան կտակաղբամէն յատկացուած 500 Ա. Ասկին, որ յատկացուեցաւ սիրմացի և թումբի շինութեանց, և վերջապէս ողբացեալ Պօղոս Նուպար Փաշայի նուիրած 20, 000 և Տիգրան Խան Քէլէկեանի 10, 000 ֆրանքը:

Յառաջ, Հորիզոն և Նոր Օր թէրթերուն բացած հանգանակութեանց արգիւնքը ըլլալով 105, 076, 45 ֆրք. նոյնպէս կը գտնուի վերոյիշեալ ընդհ. գումարին մէջ:

Նոյն երախտագիտութեամբ վեր կը հանենք, նուե Յուսաբեր Օրթէրթի բացած հանգանակութիւնը, որ արտապքեց 215 Անգլ. Ասկի: Օտար բարեսիրական հաստատութեանց օժանդակութիւնները՝ շուրջ 1414 Օսմ. Ասկի, և վերջապէս վեհանձն Հայ Բարերարներու արժէքաւոր նուիրատութիւնները և Սուրբայէն սկսեալ ամենահետաւոր Հայ Գաղութին բերած անվերապահ աջակցութիւնը, ըլլայ նիւթական նախատով, գեղերով և հին հանդերձեղներուն(*) ասաքումով:

(*) Ատացուած է 70 հակ և 4 սնտուկ հին հանդերձեղն:

ՕԺԱՆԴԱԿ ՅԱՆՉՆԱԽՈՒՄԲԻ ԿԱԶՄՈՒԹԻՒՆ

Քրտախոս զաղթականներու գամիչլիի և Հասիչի շրջանները խուժումին զուգընթաց, հետզհետէ քաղաքու ալ հասած էին մօտ 200 ընտանիքներ՝ գարձեալ թուրքիայէն զաղթած: Ասոնք ևս ունէին իրենց թշուաններն ու հիւանդները, որով օդնութեան պէտքը անհրաժեշտ կը դառնար:

Գործերու զիւրացում ձեռք բերելու նպատակաւ, ինսամատարութիւնը իր կողքին կազմեց Օժանդակ Յանձնախումբը, յանձնելով անոր տեղս զանուող զաղթականներու օդնութեան կազմակերպման գործը:
Այս մարմինն անդամ նշանակուեցան՝

ՎԵՐ. Ա. ՇԻՐԱՃԵԱՆ

ՏԵՍՐԻՑ ՏՈՒԹ. Խ. ՊՕՂՈՍԵԱՆ (*)

ՍԱՐԳԻՑ ՍԵԼԵԱՆ

ՄԻՀՐԱՆ ԲԻՒԶԱՆԴԵԱՆ

ՄԻՀՐԱՆ ՀԵՐԱՐՏԵԱՆ

ՄԻՀՐԱՆ ՊԱՍՄԱՆԵԱՆ:

Օժանդակ Յանձնախումբը լծուեցաւ գործի, նպաստեց կարօտեալներուն, բժշկական սպասարկութիւններ կատարեց, բաշխեց հին հանդերձեղէններ և մինչև 6 աշմիս՝ ապուր տրամադրեց չքաւոր ընտանիքներուն:

Հոս միջանկեալ ըսկնք, որ այս ապուրի ծախըներուն դիմաւոր մասը հոգացուեցաւ « Ֆրէնցու աֆ Արմէնիա » ի

(*) Տեսրու Տութ. Պօղոսեան և Ա. Բիւզանդեան քիչ ժամանակ վերջ հրաժարեցան:

Աւելի վերջերը, չկրցաւ զբաղել նաև Վեր. Ա. Շիրաճեան՝ իրք ինսամատարութեան ներկայացուցիչ՝ զիւրերու գործին լըծւածուն:

Հաշւոյն՝ չնորհիւ Տ.քթ., էրնէսթ Ալթունեանի ազնիւ. միջնորդութեան:

Օժանդակ Յանձնախումբը զարձեց նաև ընդարձակ շինք մը՝ Ա.քապէ թաղին մէջ և հոն տեղաւորեց ամենաշքաւոր ընտանիքները:

Բաց աստի, այս Յանձնախումբը յետագային ալ օդակար եղաւ ինսամատարութեան, իր կարգին՝ զաղթականներու շրջանները զրկելով զանազան շինուածանիւթեր, բժշկական պիտոյքներ, հանդերձեղէնն, սերմնցու և այլեալ անհրաժեշտ իրեղէններ:

Օժանդակ յանձնախումբը իր ձեռքով ծախսեց 1545 Օսմ. Ռուս. 617ը՝ ազգակի տեղս զանուող զաղթականներուն և միացեալն ալ նորահասաւու զիւզերու. հաշուոյն:

ԳԱՂԹԱԿԱՆՆԵՐՈՒ ՏԵՂԱՌՈՐՈՒՄ

Այն Յանձնախումբը որ տուային ասթիւ զաղթականներու շրջանները զրկուած էր, 28 Դեկտ. 1929 ին տեղս վերազանալով ներկայացաւց իր անդեկաղիրը, որուն ամփոփոյքն էր՝

Ա. Մինչեւ վերոյիշեալ թուականը, զաղթողներու թիւը հասած էր չուրք 1700 անձի:

Բ. Շատեր ճամբու ընթացքին կողովատեկ և թշուատ վիճակի մը մատնուած էին:

Գ. Խիստ աննպաստ պայմաններու տակ խոնուած ըլլութով այդ շրջաններու մէջ, տարափոխիկ հիւանդութիւնները ծաւալ զտած և խլած էր տասնեակ մանուկներ:

Դ. Գաղթականները այդ ճմբան խստաշունչ օրերուն, որու ապաստանարան մը չունէին և առժամնեայ կերպով տեղաւորուած տուններու մէջ:

Ե. Հոգատար և Տեղական իշխանութիւնները բարեացաւ կամ վերաբերում ցոյց տուած էին անոնց հանդէպ և մաս նաւանդ՝ առաջապահական մարզի մէջ ձեսք առած՝ հնաշ բառոր միջոցները:

Զ. Շնորհիւ կրկին իշխանութեանց բարեացակամ վերաբերումին, Յանձնախումբը նաև յաջողած էր, իր առաքելութիւնը ըստ կարի արզիւնաւորել՝ մասնաւորաբար հիւ անդներու դարմանման դործին մէջ:

ԱՌԱՋԱԲԱՆՆԵՐ

Յանձնախումբը այս կերպով իր անդեկատութիւնը ընկել վերջ, կ'առելցնէր թէ այս գաղթականները ըլլալով չարքաշ զիւզացիներ, կը փափաքէին, նախապատուաբար, իրենց գանուած չըջանները՝ մէկ անդի վրայ համախմբուիլ և լծուիլ երկրագործական աշխատանքներու։ Միւս կողմէն, Հոգատար և Տեղական կառավարութիւնները չուղելով այդ գաղթականներուն դէպի Սուրբոյ ներսերը փոխազըռութիւնը, պատրաստակամութիւն ցոյց տուած էին անոնց համար թէ՛ ձրի հողեր տրամադրելու, որ այնքան շատ էին այդ չըջաններուն մէջ, և թէ՛ ընծայելու նիւթաբարոյական ամէն աշակցութիւն։

Յանձնախումբը այս ասթիւ Խնամատարութեան կը ներկայացնէր կարդ մը տրամադրելի և յարմարազոյն հողերու անունները, ի հարկին անոնցմէ մէկուն վրայ ընտրութիւն կատարելու համար։

* *

Խնամատարութիւնը տիրող պայմաններուն որոշ չուփակ իրազեկ դառնալէ վերջ, նոր պատուիրակութիւն մը ևս ձամբայ հանեց, յանձին Տ, Բարկէն Քհնյ, Յակոբիանի,

որ գաղթականներու հոգեոր պէտքերը պիտի լրացնէր, և Վ. Շիրաճեանի, Մ. Թերձանեանի, Տոքթ. Թ. Պատմանեանի, և Մ. Մելգոնեանի։ Պատուիրակութեան պաշտօշնըն էր գաղթականներու անմիջական պէտքերը հոգալ և ուսումնասիրել անոնց անդաւորման հարցը։ Այս Պատուիրակութիւնը գլուխ հանեց իրեն վասահուած աշխատանքը և ներկայացուց իր աեղեկազիրը 30 Յունվար930ին՝ Վ. Վ. Շիրաճեանի միջոցաւ, և ինքը՝ բացի Պ. Մելգոնեանէ, մեաց այդ շրջանները հատեելու համար ինսամատարութեան հրահանդիներուն։

Համաձայն այդ անդեկազիրին, Պատուիրակութիւնը իր հետ աններով այդ շրջաններուն ծանօթի անձնաւորութիւններ, ահազին տարածութեանց վրայ քննական պատյաններ կասարած էր և առ այդ ձշզած զիւսաւորաբար 4 վայրեր, զորս ասաւել և նուազ չափով կիմայի, հոգի և ջուրի ամէն յարմարութիւններ ունեին և հետեւաբար՝ նպաստաւոր գաղթականներու հաստատման։

Այս վայրերն էին՝

Թիւ 1. Թէլ Ալի Էֆենտիի բլուր և շրջակայք, Հասսիէէն դէպի հիւսիս,

Թիւ 2. Զաբր - Պազար - Թէլիէ, Ամուտէէն Հասիէէ ճամշուն վրայ՝ Զաքր Պազար և Թէլ-Խնզըլը բլուրներուն շըրջակայքը.

Թիւ 3. Թէլ - Պրատ, Գամիշլիէն դէպի հարաւ, որուն կիրկրէն կանցնի ձաղձազ գեալը։

Թիւ 4. Կարանա, այսինքն՝ ձեպի Փեօֆ և Սիննարի տարածութիւնը. Գամիշլիէն դէպի հարաւ, արևելք որ կիրկրի մինչեւ Տէմիր Գարու։

Այս մանրամասն և լրացուցիչ անդեկութիւնները ըստանալէ վերջ, Խնամատարութիւնը, շատ մը նկատելի պատճառներով, համակարծիք չպահպան գաղթականներու

այդ շրջաններուն մէջ տեղաւորումին, որով ուղեց զառնքը Սուրբոյ ներսկը բերելու աշխատիլ, հաստատելու համար նախապատռարար՝ Աթքսանտրէթի գաշտը, իրեն յարմարագոյն վայր, ուր Տիար Տոքթ, Ա., Ալթունհանի միջոցաւ կատարուած քննութեամբ մը պատրաստ գիւղ գտնուելու հաւանականութիւնը տեսնաւած էր:

Խնամատարութեան, այս տեսակէաը հազորդուեցաւ զաղթականներուն, որոնք սակայն մնացին անդրդուելի և երբեք չուղեցին հետանալ իրենց գանուած շրջաններէն:

Եւ որովհետեւ, այդ օրերուն Հ. Բ. Բ. Միութեան Բարիդի կեղրոնը, հեռագրաւ և մասնաւոր հազորդագրութեամբ կիմացնէր, թէ Հոգատար Կառավարութիւնը զաղթականներու գանուած շրջաններուն մէջ շինարարական որոշ ձեռնարկներ պիտի կատարէ՝ իրեն արամազրուած մասնաւոր գումարով մը և միենայն տեսն կը թելազրէր՝ որ օգտուինք ասիթէն, այս և գիւղացիներու ցանկութիւնը նկատի ունենալով ուրիմն, Խնամատարութիւնը ստիպուեցաւ համակերպիլ և ըստ այնու հրահանգիլ իր պատուիրակութեան, բանակցելու Հոգատար և Տեղական իշխանութեանց ներկայացուցիչներուն հետ՝ տեղաւորման ամենայարարաբար գոյն վայրը ձգելու համար, նախապատռար՝ նախկին ներկայացուցած 4 գիտիններէն:

Հոգատար, և Տեղ, իշխանութեանց ներկայացուցիչները, ընկերակցութեամբ միեր պատուիրակութեան անդամներուն, յիշուած շրջաններուն մէջ գանուազ արամազրելի հոգերը քննիլէ և կիմացի, ջուրի և հողի ու առողջապահական յարմարութիւններն ու անպատճութիւնները ձգելէ վերջ, երկուստէք համաձայնեցան Թէլ - Պերփ ըսուած վայրին համար, որուն յանձնումի գործովութիւնը կատարուեցաւ նոյնհետայն՝ այդ շրջաններու Ֆրանսական տեղեկատու զիւանի դինուորական պետին և Տէր-Զօրի Կալուածոց Վարչութեան Տնօրէնին միջոցաւ՝ և մասնաւոր սահմանազծումով:

Տեղի հարցը այս կերպ լուծուելէ վերջ, ինամատարութեան ասածին զրծը եղաւ, ժամ առաջ զաղթականները այդ տեղին վրայ հաստատելու համար՝ ամէն միջոց և ձեռնարկ շուտափոյթ ձեռք առնել:

Այս առթիւ պէտք տեսնուեցաւ ձեռնասս և վստահելի վարիչ - պաշտօնհայի մը, բարւոք մասակարարելու համար այնքան բարդ ձեռնարկները:

Խնամատարութեան այս ուղղութեամբ կատարած փընտրատուքները և զիմումները մասնաւորներու մօտ, նոյնահոկ տուաել չափով վճարելու առաջազրութեամբ, արդիւնք չառին և նվասի ունենալով ներկայացողներուն ալ ոչ բաշւարար հանգամանքը, հարկ տեսնուեցաւ խնդրել վեր, Ա., Շիրաձնանէ, ցնոր անօրինութիւն և պատուակալօրէն՝ վերսուրեալ աշխատանքներուն հսկելու համար: Վեր, Շիրաձնանի պիտի զործակցէին Տոքթ, Թ., Պասմաճնան և Մ., Թերձնանեան, որ մինչ այդ զաղթականներու շրջանները կը զանուեին:

Հալէպէն վրաններ և հարկաւոր պիտոյքներ ու չինուածանիւթեր անմիջապէս ճամբայ հանուեցան զէպի թէլ - Պերփ, ուր ձեռնարկուեցան աղիւսներու պատրաստութեան, հողերու մշակման՝ և բնակարաններու շինութեան վերաբերեալ նախապատրաստական աշխատանքներուն: Այս բոլորին համար աշխատացուեցան զաղթականները, մասնաւոր օրավարձով փոխան սննդազնի:

Ձեռնարկները բաւական յառաջացեր էին, հազարաւոր աղիւսներ պատրաստուած և նոյնքան արտավայր ալ հողեր մշակուած, երբ 932 Մայիսին մասնաւոր առաքելութեամբ մը Ֆրանսային տեղս հասաւ երեսիսան և Ժընեվ Գաղթականաց Օֆիսի Պատուիրակ՝ Մր, Լընայ և ընկերակցութեամբ Մր, Պիւրնիյէի, զաղթականներու շրջանները այցելեց:

Թէ՛ Մ, Լընայ և թէ՛ Մ, Պիւրնիյէ, որ տեսնուած էին

Խնամատարութեան հետ ու ներկայ զանուած՝ անոր պաշտօնական նիստին, խոսացած էին ամէն գիւրութիւն և օճանդակութիւնը ընծայել նորահաստատ զաղթականներուն։ Հոն հասնելնուն սակայն, տարբեր ընթացք ցոյց տուին և իրենց տառաջին ու միակ գործը եզակ՝ զիտողութիւնը ընկ զաղթականներուն յատկացուած վայրին համար, այն տուարկութեամբ՝ թէ անիկա ֆրանքո - թուրք զաշնազրի պայմաններուն համաձայն թրք, սահմանէն ձիչդ 50 քիոմէթր հեռու չէր գտնուէր և Տեղ, Զինուորական իշխանութեանց միջոցաւ պարտաւորցնել 7 - 8 քիլոմէթր զեսի և քաշուելու համար։

Թէլ - Պետրի գտնուող մեր պատուիրակութեան տուարկութիւնները, թէ՛ պատկան իշխանութիւնները անձամբ քննած, գտած և տրամադրած էին այս գետինը, անօգուտ կ'անցնին և որով պարապի տալով այնքան ձեռնարկներն ու աշխատանքները, մեր զաղթականները կըստիսուին փոխադրուիլ գործեալ Հոգատար Իշխանութեան ցուցմունքով 7 - 8 քիլոմէթր ևս՝ այժմեան թէլ - Պրաբէ վայրը։

Այս տեղափոխութիւնը բաւական սույն արժեց Խնամատարութեան, բայց ուրիշ միջոց չկար եթէ ոչ համաձայնիլ այս նոր տեղին, որուն ևս կրիմայի, հողի, ջուրի և այլ պայմանները յետ քննութեան նովաստաւոր տեսնուած էին։

Եր կարգին՝ բազգաւորութիւն մը նկատուեցաւ նաև ձաւիալ գետին ներկայութիւնը՝ այս հողին անմիջապէս քողընափ, որմէն մեծ յոյս պահուեցաւ ի հարկին նպաստաւորուելու համար։

Թուելի վերջ վերոգրեալ մանրամանութիւնները, հսուերկու խօսքով ըսենք, որ այս տեղի ընարութեան և փոփոխութեան գործին մէջ, Խնամատարութիւնը ո՛ւեէ ձեր նկատում չունեցաւ և միայն զաղթականներու բարիքը նկատի ունենալով համակերպեցաւ տուեալ պայմաններուն։

Այս մեղադրանքները, թէ՛ թէլ - Պրաբէն առելի յարմարութիւն ներկայացնող գտիններ կային և Խնամատարութիւնը չուզեց անդրագաւոնալ, բնա՛ւ չեն համապատասխաններ իրականութեան, Հոգար, Կառավարութիւնը միայն թէլ - Պրաբէ արամազրեց մեղի և մենք հնարաւորութիւն չունէինք այլ կերպ չարժելու։

ԶԵՐՆԱՐԿՆԵՐ

ԳԻՒՂԵՐՈՒ ՀԱՍՏԱՏՈՒՄ

Երբ հողի ընարութեան հարցը այս կերպով իր վերջնական լուծումը կը գտնէր, ժամ առաջ նոր աշխատութեանց լծուելու ժամանակն էր, մանաւանդ՝ չկորսնցնելու համար գարնան ցանքը՝ Վարիչ - Պաշտօնեայի հարցը գարձեալ օրակարգի նիւթ կազմեց: Ինչպէս ըսուեցաւ, Վեր, Շիրածեան պատուակալորէն և տուամարար ստանձնած էր զործերուն զեկավարութիւնը և մինչեւ հոյ տրամազրած իր կարելի ջանքերը։

Դժբախտութիւն է կրկնել, թէ՛ յարմարագոյն անձը նորէն չգտնուեցաւ, վատահելի և ամէն ձեռնհասութիւն ունեցող անձերու մօտ կատարուած առաջարկները գարձեալ անհետեանք մնացին՝ զլիաւորաբար տեղի հեռաւորութեան պատճառաւ և որով խնամատարութիւնը ստիպուեցաւ, մինչեւ նոր պաշտօնեայի մը նշանակումը, Վեր, Ա., Շիրածեանի ազգասիրութեանը կոչ ընել՝ ըստ առաջնոյն վարելու համար գործերը։

Պէտք է լսել, որ Վեր, Շիրամհան, իր՝ ամէն զաղաթականներու շրջանները երթեւելին, գանգատ ունէր և չէր ուզեր այնքան բազմակողմանի և կնծոստ զործերու պատասխանառութիւնը ստանձնել:

Տեսնելով Խնամատարութեան նեղ կացութիւնը սուկայն, պաշտօնեայ մը չիարենալ գանհնուն առթիւ, Վեր, Շիրամհան համակերպեցաւ և դարձեալ ստանձնեց զործը՝ պատուակալօրէն:

Գաղթականներու թիւը մինչ այդ, 600 ընտանիքի հասած էր. Խնամատարութիւնը, իր նիւթական կարելիութիւնները նկատի ունենալով, յարմար տեսաւ նախ՝ ասոնց ամենաչքաւորներէն 150 ընտանիք վոխաղրել նոր շինուելիք զիւղերը՝ մնացածներուն ի վերջոյ անզրագանարուառաջարութեամբ, բնականարար՝ երբ իր նիւթական միջոցները թոյլատու ըլլային:

Այս հիման վրայ ուրեմն, աշխատութիւնները սկսան մեծ թափով, ձեռնարկուեցան բնակարաններու շինութեան, աղիւսներու պատրաստութեան, շինուածանիւթիւրու, եղներու, խաչներու և երկրագործական կազմածներու զնման և վերջապէս՝ սերմնցուի, զիւղացիներուն անհրաժեշտ սննդիւղէնին և այլ գանազան պիտոյից հայթայթման: Այս ձեռնարկներուն մէջ իրենց աշխատանքի բաժինը ընթիւն նաև այդ շրջաններուն ծանօթ վստահելի անհատներ, ինչպէս նաև ուղղակի եկուորներէն փորձառու և հողագէտ անձեր, հովանաւորութեամբ Վեր, Շիրամհանի:

Աշխատութիւնները երկար չտեւեցին և հակառակ տեղի հետառութեան (Հալէպէն շուրջ 600 քիլմ. հեռու) և վարչական ու մատակարարական անպատճմ գյուարութեանց, Թէլ - Պրատի հողին վրայ, իրարմէ մէկ քիլմ., հեռաւորութեամբ կառուցուեցան երկու տիպար զիւղեր՝ օտարներուն իսկ հիացում առթող, Սահակաչէն և Մեսրոպաչէն անուններով:

Հարկ կը զգանք տալու հետեւեալ մանրամասնութիւնները յիշեալ զիւղերու մասին:

Սահակաչէնը ունեցաւ 75 ընտանիքի համար (շուրջ 350 անձ) 75 միայնարկ բնակարաններ, վերնայարկ մասնաւոր սենեակ մը՝ անցորդ հիւրերու յատուկ, 5 շահմարաններ և արջաններու և խաչներու համար 10 մասնաբաշխնոց զոմեր, նաև՝ բաւականաչափ ջրհորներ՝ օժտուած յատակ և անոյշ ջուրերով: Բնակիչները ստացան 59 եղ, 79 այժ, սերմնցու, երկրագործական գոյաքեր և մննդեղնի փոխարէն օրավարձեր՝ համապատասխան իրենց առաջաշխատանքներուն տուներու կառուցման զործին մէջ:

Մշակուեցաւ զիւղին յատկացուած 16000 արտավայր հողէն 2800ը, ուր ցանուեցաւ ցորեն և գարի:

Մեսրոպաչէնը, ուր հաստատուեցան 65 ընտանիքներ թուով 230 անձ, ունեցաւ 62 բնակարաններ, 5 շահմարան, 2 վերնայարկ սենեակներ, ինչպէս նաև բաւականաչափ ջրհորներ և զոմեր:

Բնակիչները ստացան 54 եղ, 58 այժ, սերմնցու, պըտզատու ծառատունիեր, նոյնպէս երկրագործական կազմածներ: Յատկացուած 16 500 արտավայրէն ցանուեցաւ 1376ը և նոյնքան ալ հիրկուեցաւ:

Երկու զիւղերը ունեցան միացեալ զպրոց մը Խնամատարութեան հաշույն, ինչպէս նաև իրենց նորընծայքահան, որուն ձեռնաղրման ծախքերուն ալ օժանդակեց Խնամատարութիւնը:

Բաց աստի, երկու զիւղերն ալ ունեցան ձիակառքեր, իրենց հացահատիկներուն ջրաղացք վոխազրման համար, որ զժրախատարար զիւղերէն շատ հեռու կը գտնուեր:

Այս կարեւոր ձեռնարկները երբ յայտնեցինք թէ շուտով զլուխ հանուեցան, անշուշտ սիսակ պիտի ըլլար հետեցնել թէ՝ ամէն նախանիւթ, ամէն անհրաժեշտ պիտոյքներ ան-



միջականորէն և զիւրութեամբ տեղւոյն վրայ կարելի եղած էր ապահովել, Խնամատարութեամ՝ տեղւոյն վրայ գործող անձերը, ընկերակցութեամբ Գիւղական Յանձնախումբի անդամներուն և յաճախ առանձինն, 930ի ամբան, կեղարոնէն 5 - 600 քլմթր, հեռու, անապատներու այդ հեղձուց յիշ ու մահարոյր տաքին, եղներու, խաչներու, սերմնցուի և այլ հարկաւոր նիւթերու զնման համար, մինչեւ հեռաւոր սահմանները անցան, տաժանելի ու մարդկօրէն անտանելի երթեւեկներ կատարեցին չըջակայ զիւղերը և Աշխրէթներու վրանները և այդ զիւղազոյն զոհողութեանց չընորհիւ կրցան կառուցանել զիւղերը և զաղթականները օժտել անհրաժեշտ կարիքներով:

Նիւթական միջոցներու պարզ զոյտնինը, պէտք է ընդունիլ որ երաշխիք չէ ունե ձեռնարկի յաջողութեան, երբ՝ անոր չմիանար գործողին զոհողութիւնը և բոլորա նըւեր աշխատանքը: Այսքան հակայ և բարդ գործերու մէջ նոյնպէս սխալ է մտածել թէ թերութիւններ չեն կրնար պատահիլ: Անխուսափելի են անոնք և սակայն խորքին մէջ բացարձակօրէն մեղմացուցիչ նկատի ունենալով տեղի, միջավայրի և վարչական պայմաններու դժուարութիւնները:

ԶՈՒՐԻ ՀԱՐՑ

ԵՐԱՇՏՈՒԹԻՒՆ

Գիւղերու չինութիւնը աւարտած և զաղթականներու բոլոր կարիքները ամբողջացուած ըլլալուն, Խնամատարութիւնը այլքս կը սպահէր հունձքին, որուն չնորհիւ զաղ-

թականները միանգամբ ընդ միշտ պիտի զատնային ինքնապահ:

Խնամատարութեան գործի ձեռնարկած օրերուն, պէտք է ըսել որ այդ շրջանները առաս բուսականութիւն ունէին, ամէն կողմ կանաչութիւն, ծիլ ու ծաղիկ կար. ինչպէս բոլոր այդ վայրերու ասանեակ հազարաւոր աշխրէթները, Խնամատարութիւնն ալ վստահութիւն ունէր, թէ՛ անձրեւներու տեղումով ցանքերը առա բերք պիտի տային. չէր կրնար մտածել թէ, ըստ առնուած այս հաւասարիքներուն թէ մօսաւոր անցեալի մէջ բնաւ երաշտ մը չէ պատահած այդ շրջաններուն մէջ, չարաբախորէն կրնար պատահիլ անիկայ և քանզել իր յոյսերը: Այսու հանգերձ, երբ հետեւելով զրացի արար աշխրէթներուն և ապաւինած՝ նախախնամութեան պարզելիք անձրեւին, զիւղերու ցանքերը կատարուեցան, նկատի առնուեցաւ սևիական ջուրի մը ապահովման հարցը, որ Գիւղական Պատուիրակութեան կողմէ նախօրօք շեշտուած էր՝ ապազայ ամէն պատահականութիւնը զիւղերը մնալու մտօք:

Խնամատարութիւնը այս առթիւ առնուելիք միջոցներուն հազիւ անզրադած, գիւղախտաբար առաջին տարին իսկ, չափով մը մարախին և չափով մըն ալ տիրող երաշտութեան պատճառաւ գիւղերու ցանքերը զրեթէ արդիւնք չտուին:

Զյուսահատեցաւ Խնամատարութիւնը և նոր ուտելիք ու սերմնցու արամազգելէ վերջ զաղթականներուն, իր առաջին գործը ըրաւ գիւղերու արտերուն անհրաժեշտ ջուրին մասին մտածել, այն մտավախութեամբ՝ որ կրնար նոր երաշտութիւն մը ևս պատահիլ և ծանրացնել զաղթականներու կացութիւնը, մանաւանդ որ իր նիւթական միջոցները սպառելու վրայ էին:

Ճաղճաղ գեախին նիրկայութիւնը ըստեցաւ նախապէս, որ ջուրի հայթայթման տեսակէտով զիւսաւոր յենակէտ

Նկատուած էր՝ ի հարկին օդառակու համար:

Այս ողջութեամբ ուրին, Խնամատարութիւնը աշախատանքի լծուեցաւ, տեսակցելով և խորհրդակցելով Հոգատար Իշխանութեան պատկան պաշտօնատան և քաղաքիս երկրաչափ և մասնագէտներուն հետ, տեղւոյն վրայ զրկեց քննիչ յանձնախումբիր և ջուրի օդառագործումին հասկցող անհատներ:

Վերջի վերջոյ ձայնալ զետին առջև քարուկիր թումարի մը չինութիւնը միակ զարմանը Խնամատարու գիւղերու հողերը ոռողել կարենալու համար: Բայց տես որ այս ձեռնարկն ալ շուրջ 1500 - 2000 օսմ. հնչ, ոսկի ծախքի մը կարօտ էր, որուն ¼ ն իսկ չունէր Խնամատարութիւնը:

Այս անկարելիութեան առջև, յարժար տեսնըւեցաւ, առժամաբար գիւղերու մէջ մէկական միծ ջըրանիւներ (խարաֆ) զետեղել, որ իր կարգին միծ օգուտ մը պիտի ունենար ցանքերուն և մասնաւորաբար պիտի ապահովէր գիւղացիներու անհրաժեշտ բանջարեղէնը: Զրանիւները գնուած, գիւղերը փոխադրուած և տեղայն վրայ ամէն ինչ պատրաստուած ըլլալով, միայն առնոց զետեղումը մնացած էր, մէկէն (*): Մասնաւոր շրջանակներէ հաւաստիք արուեցաւ թէ քիչ ծախքով մը կանգնեցնել, ինչպէս ըրած էին զրացի աշիրէթները, և այդ կերպով օգտագործել ձայնալի ջուրը:

Չուղուեցաւ առիթը կորանցնել, և ուրին Խնամատարութիւնը հետամուտ եղաւ այդ կերպ թումբի մը շինութեան:

Խնամատարութեան Օժանդակ Յանձնախումբը, որ իր կարգին ամէն առիթով այս ջուրի հարցին կ'անդրադառնար

(*) Այս միջոցին Խնամատարութեան Ատենապետը Եւրոպա միկնած էր:

և մեղ հետ լրջօրէն կը հետամուէր միջոց մը դանելու, զօրաւոր հաւաստիքով մը մեզի յանձնարարեց Միս Եփէի հաստատած դիւղերուն մէջ երկար տարիներէ ի վեր պաշտօնավարող Տիար Մ, Մելքոնեանը՝ որպէս մասնագէտ թումբի շինութեան:

Տիար Մելքոնեան, որ Օժանդակ Յանձնախումբի այս առաջարկէն ամիս մը առաջ, Պ. Մ. Պատմաճեանի հետ Խնամատարութեան հաշույն գիւղերը միկնած, ձայնալ գետը անսած և մօտէն ուսումնասիրած էր, վասահացուց թէ ինչ քը պիտի կարենար այդ նախնական ձեւով թումբը շինել, որ պիտի գիւղանար նոյն իսկ 7 - 8 տարի:

Վասահելով ուրին, Օժանդակ Յանձնախումբի ջերմ յանձնարարութեան և Պ. Մելքոնեանի ալ յայտնաբերած ուժեղ հաւաստիքին, թումբի շինութեան գործը Օժանդակի հետ համախորհուրդ յանձնուեցաւ յիշեալին, որ միաժամանակ Խնամատարութեան կողմէ կրկնօրէն տրամադրուած սերմնցուն և ուտելիքը պիտի բաշխէր գաղթականներուն և պիտի հսկէր ցանքերու անթերի կատարման:

Արդիւնքը զգաւխտարար ձախող և ցաւալի գործ եւկաւ, շուրջ 347 օսմ. ոսկի վնաս մը պատճառելով Խնամատարութեան սնտուկին (*):

ՆՈՐ ԵՐԱՇՏԸ

ԵՒ ԳԱՂԹԱԿԱՆՆԵՐՈՒ ԿԱՑՈՒԹԻՒՆԸ

Թումբի ձախողումէն և շրանիւներու ալ կիսկատար ձգուելէն վերը, նկատի ունենալով Խնամատարութեան

(*) Այս գումարին մէջ կը գտնուի նաև Պ. Մելքոնեանի վճարուած ամսաթոշակները:

Նիւթական միջոցներուն զրեթէ սպառած ըլլալը; և այն մտավախութամբ, որ ի գէալ նոր երաշտի մը, այնքան հետառոր շրջաններու մէջ դանուող կաղթականութեան համար խիստ մտահոգիչ և աննել կացութիւն մը պիտի ըստեղծուէր, մեր դիմումները կրկնեցինք Հ. Բ. Ը. Միութեան և Մր. Պիւրնիյէի մօտ, խնդրելով այժմէն հնարաւոր միջոցներուն ձեռք առնուիլը՝ զիւղերը և զաղթականները զերծ պահելու համար ապագայ պատահականութիւններէ:

Արդարեւ, և գդբախտաբար շատ չանցած իրականացաւ մեր մտավախութիւնը: Երկրորդ տարին երաշտը տիրեց այնքան սասակօրէն, որուն նախընթացը՝ այդ շրջաններուն մէջ 40 - 50 տարիներէ է վեր չէր պատահած: Ամբողջ Միջագետքը ցնցուեցաւ: Տաննեակ հազարաւոր տրաբ աշխրէթներ լքեցին իրենց վայրերը և երաշտին զո՞ն տալէ վերջ սասուարաթիւ հօտեր, զաղթեցին սատ ու անդ՝ մինչ Ամբողի դաշտը:

Մեր զաղթականներն ալ անշուշտ զերծ չմնացին այս անողոք և համայնակուլ ալէաէն և ի զին իրենց ապրուսափն հայթայթման քաջ զիտնալով որ Խնամատարութիւնը այլեւ միջոցներ չունէր զիրենք կշացնելու և կրկնօրէն սերմեցու տրամադրելու, թողուցին զիւղերը և ցրուեցան գամթիշի և անոր մերձակայ զիւղերը:

Խնամատարութիւնը այս մտալիիչ իրողութեան առջև ի վիճակի չէր զարման մը մտածելու. ինչպէս ըստեացաւ իր նիւթական միջոցները սպառած էին. միայն ընեւիք մը որ կար, այն էր զիւղերը վիրուզումէ ձերբազանելու միջոցներ ձեռք առնել՝ մինչև նոր ու կարելի կար զաղբութեան մը սեեղծումը:

Այս նպատակաւ, իր մօտ ունեցած ձզիմ զումարով զիւղերու մէջ ելեքտրաշարժ ջրհան (մօրկօր) մը և ալիւրի ջաղացք մը զետեղեց և աշխատեցաւ զաղթողներէն գոնէ

20 - 30 ընտանիք զիւղերը վերազարձնել. գմբախտաբար կարելի չեղաւ այս և որով ստիպուեցաւ օրէքսով, միայն 10 անհատ զեղացիներ վարձել և անոնց պահպանութեանը յանձնել զիւղերը: Աւելցնենք որ ջրհանին զետեղման զուշ զընթաց, եղանակին համապատասխան կորեկի ցանք ալ կատարուեցաւ, որուն պիտի բաւարարէր ջրհանով ստացուած չուրը:

Մինչ այս, ազգու գիմումներ կատարուեցան զարձեալ Մր. Պիւրնիյէի, ինչպէս նաև Հ. Բ. Ը. Միութեան կեզրոնին միջոցաւ՝ Ժընեի Նանսէնեան Գաղթկնց. Օֆիսին, վերջնոյն յանձնելու համար զիւղերու պահպանման և վերականգնումի գործը:

Եւ որովհետեւ առաջին զարմանը, ջուրի խնդրոյն լուծումն էր, որմէ վերջ զիւղացիները, նոյնիսկ իրենց ծախսքերովը, պատարաստ էին զիւղերը վերագանալու, Խընամատարութեան վերոյիշեալներու հետ ունեցած բանակցութեանց առանցքը կաղմեց քարուկիր թումբի շինութեան հարցը:

Գոհունակութեամբ կ'արձանագրենք որ թէ՛ Հ. Բ. Ը. Միութեան կեզրոնը և թէ՛ Մր. Պիւրնիյէ, ընթացք տասլով Խնամատարութեան գիմումներուն, Ժընեի Նանսէնեան Գաղթ, Օֆիսի շրջանակին մէջ լուրջ՝ հնամաքրութիւն արթնցուցին մեր զիւղերուն նկատմամբ, որուն հետեանք յիշեալ Օֆիսէն հրահանդ տրուեցաւ Մր. Պիւրնիյէի, առաջին առթիւ ուսումնակրելու, զիւղերուն անհրաժեշտ և զող քարուկիր թումբի շինութեան հարցը և ըստ այնոյնելու տեղեկագիր մը:

Մր. Պիւրնիյէ չուշացաւ մեկնելու զիւղերը, խորհրդակցելու Խնամատարութեան հետ և յղելու իր տեղեկագիրը կրկնօրէն չեշտելով թումբի մը շինութեան պէտքը՝ զիւղերու վերականգման անսակէտով:

Հոս մասնաւոր երախտագիտութեամբ վեր կը հանենք

համեւ Տօքթ. Ա. , Ալթունեանի հարազատարին՝ Տօքթ. Երևէսթ Ալթունեանի թափած այնքան գերզնահասելի ճիղերը՝ ամէն զնով և օր առաջ գիւղերը կործանումէ փրկելու և վերապահանելու առթիւ:

Յարգելի բժիշկը անձնութերաբար մեկնեցաւ Դամաշկոս, Գամբիչի շրջանները և մեր գիւղերը, տեսակցեցաւ Դամասկոսի Բ. Գոմիսերի փոխանորդին և անդույս Պատուիրակին, ինչպէս նաև Տէր-Զօրի և Գամբիչի շրջաններու Հոգատար Իշխանութեանց ներկայացուցիչներուն հետ և բաց աստի՛ միջնորդ հանդիսանալով Խնամատարութեան, ուղղակի, հեռագրաւ և նամակներով յարաբերութեան մտաւ Նանսէնեան Օֆիսի Նախագահ Մէջը ձօնսընի հետ, որ իր վաղեմի ծանօթը և բարեկամն էր:

Ծնորհիւ յարգելի բժիշկին այս ազնիւ գոհողութեանց, Նանսէնեան Օֆիսը առաւել ևս կարեորութեամբ նկասի առաւ մեր գիւղերու հարցը և այդ ուղղութեամբ ալ հրահանգեց իր Սուրբոյ ներկայացուցիչը Մր. Պիւրնիյէն՝ անմիջապէս Օֆիսին ներկայացնելու համար թումբի շինութեան անհրաժեշտ եղով ծախքերուն նախահաջիւը:

Մր. Պիւրնիյէ գարձեալ խորհրդակցեցաւ Խնամատառութեան հետ և ուղղակի գիւղերը այցելելէ, Պատկան Իշխանութեանց հետ տեսնուելէ վերջ, յդեց իր նախահաշիւը, 1500 - 2000 Օսմ, ոսկի արժեցնելով քարուկիր թումբի մը շինութիւնը:

Ասկէ զատ, Տօքթ. Է. Ալթունեան, որ Եւրոպա մեկնեցաւ, յատկապէս շեղելով իր ձամբորդութեան ուղեգծէն Ժընկ գացած և անձամբ տեսակցած ըլլալով Մէջը ձօնսընի հետ, նոր հեռագրական հրահանգ մը տրուեցաւ Մր. Պիւրնիյէի, որպէսպի թումբի շինութեան վերաբերալ կարդ մը լրացուցիչ քննութիւնները փութացնէ և միաժամանակ ապահովէ գիւղերուն պահպանումը:

Խնամատարութիւնը ուրիմն, այժմ սպասողական զիրքի մը մէջ է որ կը գտնուի և անշուշտ ի վիճակի չէ ըսելու իր վերջին խօսքը՝ գիւղերու ապազային մասին:

Գիւղերը միայն քարուկիր թումբի մը կառուցումով կարելի պիտի ըլլայ վերակենդացնել, և այս կէտն ալ Ազգ, Դէնից, Նանսէնեան Օֆիսին նկատառութեանը յանձնուած ըլլալով, անոր ցայց առաջիք շահագրգութեան և վերաբերումէն կախուած է գործին ինչ կերպ վերջաւորումը:

Աւելցնենք որ Խնամատարութիւնը 4 ամիս առաջ կատարած է իր հաշուեյարդարը և այդ թուականնէն ի վեր գիւղերու պահպաններուն օրավարձերը, մեքենագէտի ամսականները և այլ ծախքերը, որ ամէն ամիս շուրջ 20 Օսմ, ոսկի կը համնի, կը հոգացուին անհատական միջոցներով:



չե իր կարելին զլացած ըլլալու տեսակէտով։ Մսխումշներու, անտեղի ծախքերու մասին եղած զրոյցները չարամտութեան սահմաններէն անդին չեն կրնար անցնի՝ նկատելով գործին բազմակնիս բնոյթն ու սուլզած գժուարութիւնները։

Իսկ, ինչ որ կը վերաբերի Վեր, Շիրածհանի ունեցած զործունէութեան, ի վիճակի ենք յայտնելու, որ անիկա իրեն վստահուած գործը տարաւ խիստ տաժանքու պայմաններու տակ, անապատի արիւն արեին ներքե՛ բոլորու վին զրկուած վարչական և մատակարարական զիւրութիւններէ և յաճախ հնդակայ զրացի աշիրէթներու ոչ բարեացակամ վերաբերումին՝ ինչ որ կը պարտազրէր շատ անզամ պէտք եղածէն աւելի վճարելու՝ զիւղերուն և զիւղացններուն անհրաժեշտ կարիքները հայթայթելու համար։

Եորահաստատ զիւղերու հաշուական զործառութիւնները քննող հաշուաքննիչ Անդամ-Մարմիններու տեղեկագիրները, որոնք մանրամատնօրէն Խնամատարութեան ուշադրութեան տարիկայ եղան, կը պարունակէին միմիւյն զիւղութիւններ՝ հաշուական անկանոնութիւններու և կարդ մը երկրորդական թերութիւններու մասին։

Եյդ թերութիւնները՝ անխուսափելի պիտի ըլլային անչուշ, վերեւ յիշուած պայմաններու տակ զործող ուեկանձի համար, զլխաւոր հարցը և միմիւյն նկատելի՝ զեղծումի մը կամ զիստմիւոր մախումի մը պարագան էր, որ երբէք տեսնուած չէր։

Գալով 8000 ոսկին յումպէտս վատնումի խնդրոյն, կը սիսալին քննապատները և իրենց հետ կը մոլորեցնեն հանրային կարծիքը։

Խնամատարութիւնը այդ գումարէն 617 ոսկին միայն տեղույս զաղթականներու պէտքերուն յատկացուց՝ Օժան-

Ա Ե Ր Հ Ա Բ Ա Ն



Յաւով կ'արձանագրենք, որ իր գործունէութեան շրջանին Խնամատարութիւնը ենթակայ դանուեցաւ ամէն տեսակի քննադատութեան և խծրձանքի։

Զանազան ձեռով տարածայնութիւններ եղան, որպէս թէ՛ անիկա մսխումներու, անհարկի ծախքերու ընթացք տուած էր և յումպէտս վատնած 8000 ոսկին։ Նաև իր ներկայացուցիչը Վեր, Ս., Շիրածհան գործը տարած էր ըստ հաճոյս և պատասխանատու պայմաններու տակ։

Մեր տուածին խօսքին մէջ արգէն ըսինք, որ այս զրբոյկը բանագէճի գուռ բանալու մտօք հրատարակուած չէ՛. նորեն կը կրկնենք և կ'աւելցնենք, որ հնարաւոր բոլոր միջոցներով Խնամատարութիւնը չխնայեց իր չանքերը՝ բարեւաելու համար գաղթականներու թշուառ զոյտավիշակը. և եթէ իր այս զործունէութեան այնքան բարդ հանգոյցներուն մէջէն չկարողացաւ սպասուած արդիւնքը ապահովել, պատճառը միայն և միայն բնութեան աղէտին, երկու տարի շարունակ կրկնուող երաշտութեան մէջ պէտք է փնտուել։

Խնամատարութիւնը գործեց անձնուիրաբար, խղձամորէն և բոլորանուէր ձիգերով և երբէք խղձահար

զակ Յանձնախումբին միջոցաւ, իսկ մնացեալով հիմնեց երկու գիւղեր՝ այնքան ներկայանալի բնակարաններով, և յետոյ՝ $2\frac{1}{2}$ տարի ամրով գիւղերու մէջ, մօտ 700 անձ կշացուց, պատապարեց, գիւղացիները լծկան եղներու, խաչներու, երկրագործական բոլոր կազմածներու աէք դարշուց, մեղաւոր չէր ինամասարութիւնը, որ կրկին առարիներու աննախընթաց երաշտին պատճառաւ ո՛չ միայն ցանուած սերմերը փացան, այլև խոտ մասկ չբուստ և գիւղացիներն ալ լրեցին գիւղերը՝ ինչպէս ըրած էին այդ շրջաններու հաղարաւոր աշիրէթները:

Աւելցնենք, որ տակաւին այդ գիւղացիները, չնորշ հիւ իրենց ունեցած եղներուն, կաթնառ կենդանիներուն և երկրագործական պիտոյքներուն և մանաւանդ իրենց հետ աարած քանի մը ամսուան պաշարին, իրենց այսօրուայ շրջաններուն մէջ ապրելու գիւրութիւններ կը վայելին: Անոնք պատրաստ են իրենց ծախքերով գիւղերը վերադառնալու՝ անմիջապէս որ ապահովուի արտերուն հարկաւոր ջուրը:

Ողջմտորէն մտածենք ուրեմն, արդա՞ր են եկած դիտութիւնները, ընթերցողը թող եղրակացնէ:

Ի գիտութիւն, ներկայիս կը կցենք մեր ունեցած ընդհանուր հասոյթներուն և ծախքերուն մանրամասնութիւնները պարունակող հաշուեցուցակ մը՝ որոշ բաժանումներով:

* *

Փակելէ առաջ, քաղցր պարտականութիւնն կը նկատենք, մեր մասնաւոր չնորհակալութիւնները յայտնելու ամենն անոնց, որոնք նիւթապէս և բարոյապէս իրենց

աղնիւ աջակցութիւնը բերին յօդուա այս եղբայրական օդնութեան գործին և գարձեալ անոնց՝ որ մեր աշխատանքներուն մէջ թե թեկունք պան մեզի և անձնապէս ալ վերցուցին իրենց բաժին ինկած պարտականութիւնը:

Ի ԳԻՄՍՅ ԳԱՂԹ, ԽՆԱՄԱՏԱՐՈՒԹԵԱՆ

ԿԵԴՐ, ՅԱՆՉՆԱԽՈՒՄԲԻ

Գանձապահ	Ատենապիր	Ատենապես
Ա. ՄԱԶԼՈՒՄԵԱՆ	ՏԲԹ. Յ. Տ. ՊԱԶԱՐԵԱՆ	ՏԲԹ. Ա. ԱԼԹՈՒՆԵԱՆ

Ա Ե Ր Զ

ՀԱԴՀԱՅՈՒԹ ՄՈՒՏՏԳ

Օսմ. Ռոկին 0/0 էն

Հ. Բ. Բ. Միութեան Բարիզի Կեղբո-		
նական Հնդնկչ. Յանձնանխումբ	380817	—
(5600ը Հալէպի Մ. Ժողովի Միջոցաւ)		
Միս էտիթ Ռօպէրթունէ	83775	—
Վեր. Պըքըսթընէ	2810	—
Պէյրութի Զափ. Որբ. Միութեանէն	5862	—
Պէյրութին՝ Գեր. Տ. Եղիշէ Սրբազա-		
նի միջոցաւ	10461	483725 —
Լուգուիթէն՝ տեղւոյն Առաջնորդու-		
րանին միջոցաւ	181	—
Վահմ. Յ. և Պ. Կիւլպէնկեան Եղբք.	11250	—
Վահմ. Պ. Կիւլպէնկեանէ	11250	—
Եղիպատահայ Տիար Գ. Զէքինէնէ	195	—
Օր. Վերժին Խերեանէ Յուսաբերի միջց.	1187	24063 —
Յուսաբեր թերթի հանգանակութենէն	24230	—
Դամասկոսէն՝ Գեր. Տ. Խազ Սրբա-		
զանի միջոցաւ	6300	—
Տրիպոլսոյ Թազ. Խորհուրդէն	211	—
Ճէպէլ Տրիպէն 609		
Դամասկոսէն 136 50	836	50
Բաքային 91		
Վահմ. Գ. Կիւլպէնկեանէ Հ.Բ.Ը.Մ.Ի մշց.	45359	76936,50
Երուսաղէմի Ազգ. Պատրիարքարանէն	20488	—
Տիար Տ.թ. Նաձարեանէ (Հալէպ)	57	—
«Ֆրէնսս ափ Արմէնիա»՝ Տօթք. Էր-		
նէսթ Ալթունեանի միջոցաւ	19879	—
Պէյրութին Ոմն	36	—
Տէր-Զօրի Գլութեան Խաչի Մ. Ճիւղէն	572 50	41032,50
Փոխազբելի		625757 —

	Օսմ.	Ոսկին	%	Էն
Փոխազրեալ		625757	—	
Արքասանտրէթի Աղջ. Վարժարանի գանձանակէն	125	—		
Պէլութէն՝ Սիւպղիսթանս Միլթէրի Հայ պաշտօնէութենէն	515 50	—		
Տիար Տոքթ. Գանթարձեանէ (Հալէպ)	54	—		
Ռումանիոյ Աղջ. Առաջնորդարանէն և Կեղր. Յանձնախումբէն՝ Հալէպի Աղջ. Առաջնորդարանին միւ- ջոցաւ	38895	—		
Ամերիկայի Մելրէի Միութենէն	11570	—	51159,50	
Երուսաղեմի ազգայիններէն	5962	—		
Եօլուն - Օլուգ և Խալըր Պէկի աղ- դայիններէն	1300	—		
Գամասկոփ Որբ. Միութեան կողմէ	56	—		
Սայտայէն՝ Վեհ. Տ. Տ. Սահակ կու- թողիկոսի միջոցաւ	581 75	—		
Դաւրէճի Ազգայիններէն՝ Վեհ. Տ. Տ. Սահակ կաթողիկոսի միջոցաւ	5585	—	13484,75	
Լորա Մէլրը Յօնաէն՝ Բարիթէն կրէյ- սի միջոցաւ	16895	—		
Արժանթինի - Թուքումանի ազգյներէն.	1147	—		
Սէնթ - Եթիէնի Գործաւորական Միու- թենէն	1180	—		
Արքասանտրէթէն՝ Տիար Գ. Մենակէ	109	—		
Ամերիկայէն՝ Տիար Ա. Մարկեանէ	555 13	19886,13		
Տիար Գ. Գափուձեանէ՝ Հալէպի Աղջ. Առաջնորդարանի միջոցաւ	200	—	200	—
Փոխազրեալ		710487,38		

	Օսմ.	Ոսկին	%	Էն
Փոխազրեալ		710487,38		
Հալէպի Ֆրանս. Հիւպատոսարանէն	227	—		
Պազարտի Զափ. Որբ. Միութենէն	1840	—		
Հէնէտիւալի Հայ պաղթականներէն	1101	—	3168	—
Երուսաղեմէն՝ Տիար Յ. Գրիգորիանի միջոցաւ	1190	—		
Գորսովայի Հայ գաղութէն	8709	—		
Երուսաղեմի Անկիլուգան Եպիսկոպո- սարանէն	641	—		
Հ. Մ. Բ. Միութեան Մոնթէվիսիոյի Մանամիւզէն	9484	—		
Լոս - Անկիլուգէն՝ Տիար Գիսակ Վ. Բոյքէ	2754	—	22778	—
Տիար Տոքթ. Ա. Ալթունեանէ (Հալէպ)	2500	—		
Էնզէլիի Աղջ. Հանգանակութենէն Մե- լքթանքեան Արքակակ. միջու.	1570	—		
Սան Բաւլոյի Տարազրելոց Յնձնխմբ.	3232	—		
Ոմն Լոնտոնէն	4498	—		
Լոնտոնի Արգարեան Կատկազրամէն՝ Հ. Բ. Բ. Բարիզի Կեդրոնին միջու.	56200	—	68000	—
Ամերիկայի Երիտասարդաց Միութե- նէն՝ Տ. Բ. Թ. Պամաձեանի միջու.	1150	—		
Պանքայէն ստացուած տոկոս	9247 03	—		
Ջանազան Հասոյի	1000 17	11397,20		
		815830,58		
Գիիղ ԱկԱն ՀԱՍՈՅՅԻՆԵՐ				
Գիւղացիներու ծախուած կենդանին- րու փոխարժէքը	6881 86			
Գիւղացիներու վճարած բնակարանի կանխավճարներ	12240 13			
Գօօբէրաթիվէն ծախուած իրեղէնք	26012 38			
Ջանազանք	786 59	45920,96		
ԸՆԴՀԱՆՈՒՐԻ ԳՈՒՄԱՐ		861751,54		

ρημ

ζητ

ηητ

ψητ

φητ

γητ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏԱԿԱՆ

Թէլ - ՊՐԱՔԻ ՍԱՀԱԿԱԾԵՆ ԵՒ ՄԵՄՐՈՊԱԾԵՆ ԳԻՒԴԵՐՈՒ

ՀԱԼԵՊԻ ԳԱՂԹԱԿԱՆՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ

ՕՃԱԿՎՈՒ ՅԱՆՁՆԱՍՈՒՄԲԻ ՄԻՋՅԱԼԻ ԿԱՏԱՐՈՒՄԸ ՇԱԽԵՐԵՐ

ԾԱԽԲԵՐՈՒԻ ՏԵՍԱԿԸ	ԳԻՒԴԵՐՈՒ ՑԱԼԵԱՐԸ	ՀԱՆԱՅՆԱՄՐԸ	ԽԱՆԱՄԱՄՐԸ	ՀԱՄԱԳՈՆՄՐԸ
	ՑԱԼԵԱՐԸ	ԺԱՆԴԱԿԱՄՐԸ	ԿԵՂՋԱՆ.	ԺԱՆԴԱԿԱՄՐԸ
	ԺԻԾԱԳԱՆ	ԺԻԾԱԳԱՆ	ԺԻԾԱԳԱՆ	ԺԻԾԱԳԱՆ
Գիւղական Յանձնախռովմբի, Պատուիրակութեանց և հիւրերու բնակարանի և սննդալիքնի ծախսը	5286,54		462 —	5748,54
Յանձնախռովմբի և Պատուիրակութեանց երթևեկի և հողային քննական պայտաներու համար ծանա- պարհածախս և սպասած պլնզին	28512,12	2061 —	9558,86	40131,98
Պաշտօնէի և մասնաւոր քննիչներու թոշակ	5300 —		12633,40	17933,40
Վարչական մանր ծախսեր	475,21			475,21
Գրենական, փոստ, հեռագիր	778,31			778,31
Առողջապահական	40352,18	2061 —	22654,26	65067,44
Կրթական (Թէլ - Պրաք, Գամլշլի, Հասիչ)	1152,25	6329,19	2450 —	9931,44
Կահ կարասիք	2606,73	1320,75	4850 —	8777,48
Գաղթականներու և անոնց պատկան գոյքերու, ինչ- պէս նաև Հալէպէն դրկուած իրեղներու փո- խադրավարձք	355,63			355,63
Գաղթականներու և շինութեանց աշխատող վարպետ- ներու աշխատավարձք	18814,24	14956,32	2215 —	35985,56
Գաղթականներու բացառիկ դրամական նպաստներ	154014,17	2000 —	7622,37	163636,54
Հին հազուատեղներու փոխազբավրձք և մաքս	217295,20	26667,26	39791,63	283754,09
Գիւղական մեայուն գոյքեր (վրան, կառք, կշիռ, ջո- ղացք, ջրհան և զանազան գործիքներ)	2438,82		2927 —	5365,82
Գործածական գոյքեր (պարկ, թիթեղ, գոյլ, չուան և լո- րիչ և այլ պիտոյքներ)	509,48		3381,94	3891,42
Բրկագործական գործիքներ (արօր, խոր, բան, բլ- րիչ և այլ պիտոյքներ)	6126,57	11102,25		17228,82
Բնականակառ, նորոգութիւն, ձիերու գարի և յորդ	4004,28			4004,28
Անապահութեան, եղ, այծ, ձի, ջորի	6659,53			6659,53
Սերմեցու և գաղթականներուն ուսեելիք	237033,88	37769,51	46100,57	320903,96
Բանջարեղներ, սերմեր, ծառատունիեր	3087,16	2295,32	1719,75	7102,23
Գաղթականներու բաժնուած տնական պիտոյքներ	95553,26			95553,26
Գոօփէբաթիքներու համար զնուած իրիդենք և ու- սեսեղներ	63890,52	5838,75	57762 —	127491,27
Հիւմթեանց և կենդանիներու յարդ և փոխազբութիւն և համար ատաղձ, գերան և փոխազբութիւն	1478,45			1478,45
Թումբի շինութեան համար երկաթեղնեն, պարկ, գե- րան, պաշտօնէի և լուն,	6041,81			6041,81
Ջրանիւներ [խարաֆ], զետեղում, ջրհորներու բո- ցում, քար և լուն,	407085,08	45903,58	105582,32	558570,98
Ելքաբարձրական ջրհանքներ, զետեղում, գերան, պա- շտօնէի և լուն,	32885,55	7210,48		40096,03
Համար պատաղ, գերան և փոխազբութիւն	33668,04		2529,45	36197,49
Համար պատաղ, գերան և փոխազբութիւն	72986,27	17616,76	3600 —	94203,03
Համար պատաղ, գերան և փոխազբութիւն, պարկ, գե- րան, պաշտօնէի և լուն,	2767,94			2767,94
Համար պատաղ, գերան և փոխազբութիւն, պարկ, գե- րան, պաշտօնէի և լուն,	20082,95	14682 —		34764,95
Համար պատաղ, գերան և փոխազբութիւն, պարկ, գե- րան, պաշտօնէի և լուն,	2000 —	14969,88		16969,88
Համար պատաղ, գերան և փոխազբութիւն, պարկ, գե- րան, պաշտօնէի և լուն,	549302,88	92813,77	153060,01	795266,66

ԾԱԽԲԵՐՈՒԻ ՏԵՍԱԿԸ		0. 0. 0/0
Սննդական և ապուր		26300,84
Բժիշկ, գեղօրայք		4339,07
Մասնակի օգնութիւն և նպաստներ		7608,51
Արագելի գաղթակայանի վարձք և ներքին ծախսք		12457,50
Արագելի գաղթակայանի վարչութիւն		975 —
Զբաւուր ննջեցեալներու թաղում		184,75
Գրքը - կանի կեմերէկցի 7 չքաւոր ընտանիքներուն նպաստ		3500 —
Արտասահմանէն եկած հանդերձեղէններուն փոխա- զբարձք, մաքս և զանազան ծախսեր		2574,21
		57939,88
		57939,88

ՀԱՐՑԱԿԱՆ ՏԱԿԱՆ

ԾԱԽԲԵՐՈՒԻ ՏԵՍԱԿԸ	ԽԱՆԱՄԱՐԿՆ.	0. ԺԱՆԴԱԿԱՄՐԸ
Պաշտօնէից թոշակ	3300 —	2750 —
Գրենական, փոստ, հեռագիր	444,79	530,67
Զանազանք	136,35	505,04
	3881,14	3785,71
		7666,85

ԱՄՓՈՓՈՒՅ

ՄՈՒՏՏՈՒՅ		
Մուտտույ նպաստներ		815830,58
Գիւղական հասոյթներ		45920,96
		861751,54
Ելք		
Գիւղերու շինութեանց և թէլ-Պրաքի գղթեններուն,		795266,66
Հալէպի գաղթականներուն		57939,88
ՀՆԴՀԱՆՈՒՅ ՎԱՐՉԱԿԱՆ ԾԱԽԲԵՐ		
Կերպոնական ինսամատարութիւն		3881,14
Օժանդական համախռում		3785,71
Մնացական պատուիլու		860873,39
		878,15

(*) Խնամատարութեան հաշուեյարգարէն վերջ (1932 թուլիս) ասիկա, ինչպէս նաև ոսկիէ աւելի գումար մը ծախսուած է գիւղերուն պահպանութեան համար՝ անձնական միջոցներով:

Թէկ - ՊՐԱՔԻ ՍԱՀԱԿԱՇԵՆ ԵՒ ՄԵՄԲՈՊԱՇԵՆ ԳԻՒՂԵՐՈՒ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԱՂԹԱԿԱՆՆԵՐՈՒՄ ՀԱՄԱՐ

ՕԺԱՆԴԱԿ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲԻ ՄԻՋՈՑԱԿ ԿԱՏԱՐՈՒՄԸ ԾԱԽՔԵՐ

ԴԱՄԱՎՈՐՈՒՄ ՏԵՍԱԿԸ	ԳԻՒՂԵՐՈՒՄ ՑԱՆՃԱԽՍՈՒՄԲԻ, ՊԱՍՈՒԽՐԱԿՈՒԹԻԱՆՑ և ՀԻՒՐԵՐՈՒ ՔՆԱԿԱՐԱԿԱՆԻ ՏԱՂՄԱՔ	ՀԱԼԵՎՈՒՄ ՑԱՆՃԱԽՍՈՒՄԲԻ և ՊԱՍՈՒԽՐԱԿՈՒԹԻԱՆՑ ԿՐԹԵՆԵԼԻ ԱՊԷՆՂԻՆ ՏԱՂՄԱՔ	ԽԱԼԵՎՈՐՈՒՄ ՑԱՆՃԱԽՍՈՒՄԲԻ (ԹԵԼ-ՊՐԱՔ, ԳԱՄԻՇԱԲ, ՀԱՍԻՇԵ)
Գիւղական Ցանճնախսումբի, Պատուխրակութեանց և Հիւրերու քնակարականի տաղմաք	5286,54	462 —	5748,54
Ցանճնախսումբի և Պատուխրակութեանց կրթենելի և հողային քննական պատուած պարհածախս և սպառած պէնղին	28512,12	2061 —	9558,86
Պաշտօնէի և մասնաւոր քննիչներու թողական	5300 —	12633,40	17933,40
Վարչական մանր տաղմաքեր	475,21		475,21
Գրենական, փոսթ, հեռագիր	778,81		778,81
Առողջապահական	40352,18	2061 —	22654,26
Կրթական (ԹԵԼ-ՊՐԱՔ, ԳԱՄԻՇԱԲ, ՀԱՍԻՇԵ)	1152,25	6329,19	2450 —
Կահ կարասիր	2606,73	1320,75	4850 —
Գաղթականներու և անոնց պատկան գոյքերու, ինչ պէս նաև Հալէպէն ղրկուած իրեղններու փոխազրավարձք	355,63		355,63
Գաղթականներու և անոնց պատկան գոյքերու, ինչ պէս նաև Հալէպէն ղրկուած իրեղններու փոխազրավարձք	18814,24	14956,32	2215 —
Գաղթականներու և շինութեանց աշխատող վարպետներու աշխատավարձք	154014,17 217295,20	2000 — 26667,26	7622,37 39791,63
Գաղթականներու և զանազան գործիքներ (վրան, կառք, կշիռ, ջուազք, ջրհան և զանազան գործիքներ)	2438,82	2927 —	5365,82
Գործածական գոյքեր (պարկ, թիթեղ, դոյլ, չուան և լու)	509,48	3381,94	3891,42
Երկրագործական գործիքներ (արօր, խոր, բան, բըրիչ և այլ պիտոյքներ)	6126,57	11102,25	17228,82
Երկրագործական գործիքներ (արօր, խոր, բան, բըրիչ և այլ պիտոյքներ)	4004,28		4004,28
Բնոնակառք, նորոգութիւն, ձիերու գարի և յորդ	6659,53		6659,53
Անասունք, եղ, այծ, ձի, ջորի	237033,88	37769,51	46100,57
Սերմնցու և գաղթականներուն ուսելիք	3087,16	2295,32	1719,75
Բանջարեղինի սերմեր, ծառատունկեր	95553,26		95553,26
Գաղթականներու բաժնուած տնական պիտոյքներ	63890,52	5838,75	57762 —
Համար առաղձ, գերան և փոխազրութիւն	1478,45		1478,45
Համար պատկանին կամագ, գերան և փոխազրութիւն	6041,81		6041,81
Հինութեանց և կենդանիններու յարդ և փոխազրութիւն	407085,08	45903,58	105582,32
Համար առաղձ, գերան և փոխազրութիւն	32885,55	7210,48	40096,03
Հինութեանց և կենդանիններու յարդ և փոխազրութիւն	33668,04		2529,45
Հինութեանց և կենդանիններու յարդ և փոխազրութիւն	72986,27	17616,76	36197,49
Հինութեանց և կենդանիններու յարդ և փոխազրութիւն	2767,94		94203,03
Հինութեանց և կենդանիններու յարդ և փոխազրութիւն	20082,95	14682 —	2767,94
Հինութեանց և կենդանիններու յարդ և փոխազրութիւն	2000 —	14969,88	34764,95
Հինութեանց և կենդանիններու յարդ և փոխազրութիւն	549392,88	92813,77	11696,36
Հինութեանց և կենդանիններու յարդ և փոխազրութիւն	549392,88	153060,01	11696,36
Հինութեանց և կենդանիններու յարդ և փոխազրութիւն	549392,88	795266,66	

ԾԱԽՐԲԵՐՈՒԽ ՏԵՍԱԿԱՆ	Օ. Ռ. % ԷՆ
Մանդաղին և ապուր	26300,84
Բժիշկ, գեղօրացք	4339,07
Մասնակի օգնութիւն և նորաստներ	7608,51
Արագէի գաղթակայանի վարձք և ներքին ծախըլը	12457,50
Արագէի գաղթակայանի գլորոցին	975 —
Զքաւոր ննջեցեալներու թաղում	184,75
Գրըք - հանի կէմէրէկցի 7 չքաւոր ընտանիքներուն նոպաստ	3500 —
Արտասահմանէն եկած հանդերձեղէններուն փոխա- զրավարձք, մաքս և զանազան ծախըլը	2574,21 57939,88
	57939,88

ԾԱԽԲԵՐՈՒԻ ՏԵՍԱԿԸ	ԽՆԱԺԱՐԿԻՆ. ԿԵՊ. ՅՆՁՆ.	ՕԺԱՆԴԱԿ ՅԱՆՃՆԱԽԱՄՔ	ՀԱԺԱԳՈՎՈՒՄԸ
Պաշտօնէից թոշակ	3300 —	2750 —	6050 —
Գրենական, փոստ, հեռագիր	444,79	530,67	975,46
Զանազանք	136,35	505,04	641,39
	3881,14	3785,71	7666,85

Ա Ս Փ Ո Փ Ո Ւ Ա

ՄՈՒՏՏՔ		
Հնդհանուր նպաստներ		815830,58
Գիւղական հասոյթներ		45920,96
		<u>861751,54</u>
ԵԼՔ		
Գիւղերու շինութեանց և Թէլ-Պրաքի գովկներուն,	795266,66	
Հալէպի գաղթականներուն	57939,88	
ԸՆԴՀԱՆՈՒՐ ՎԱՐՉՈՒԿԱՆ ԾԱԽԲԵՐ		
Կեդրոնական լինամատարութիւն	3881,14	
Օժանդակ Յանձնախումբ	3785,71	
Մնառուկը պատրաստ (*)	860873,39	
		<u>878,15</u>

^(*) Խնամասարութեան հաշուելաբգալէն վերջ (1932 թուիս) ասիկա, ինչպէս նաև 100 ոսկիէ աւելի գումար մը ճախսուած է գիւղերու ոլահպահութեան համար՝ անձնական մէջոցներով:

10. *Leucosia* (L.) *leucostoma* (L.) *leucostoma* (L.) *leucostoma* (L.)

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ՀՀ Ենթական



2013

ՀՀ Ազգային գրադարան



NL0049440

